

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 01

«21» ՀՈՒՆՎԱՐԻ 2011Թ.

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 12 հոդվածով Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական
համայնքի ավագանու 21 հունվարի 2011թվականի թիվ 01 նիստի օրակարգը:

Նիստի օրակարգը

- 1 . Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի
2010թվականի բյուջեի կատարման մասին հաշվետվություն
Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի
2011թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները հաստատելու
մասին
Ձեկ. Համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքում համաձայն
«Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝
վարչական իրավախախտումների համար տուգանք նշանակելու մասին
Ձեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի կարիքների համար ապրանքների ձեռք բերման, աշխատանքների և ծառայությունների մատուցման համար գնման պայմանագրեր կնքելու թույլտվության մասին
Ձեկ՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ղ. Ղահրամանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝ _____ Ե. Հակոբյան

21 Հունվարի 2011թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 02

«21» ՀՈՒՆՎԱՐԻ 2011Թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2010թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման մասին հաշվետվությունը հաստատել՝ համաձայն հավելվածի:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ղ. Ղահրամանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝ _____ Ե. Հակոբյան

21 Հունվարի 2011թ.

գ. Անուշավան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անուշավանի համայնքի ավագանու
2011թվականի հունվարի 21-ի թիվ 02 որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2010թվականի Անուշավան համայնքի բյուջեն եկամտային մասով կատարվել է 101,7 տոկոսով, իսկ ծախսային մասով՝ 82,3 տոկոսով:

2010թ. նախատեսված են եղել

Ընդամենը եկամուտներ՝	-	33573,8 հազար դրամ
որից՝		
հողի հարկ	-	3906,3 հազար դրամ
գույքահարկ	-	2094,0 հազար դրամ
այլ եկամուտներ	-	1885,7 հազար դրամ

տեղական տուրք	-	300,0 հազար դրամ
դոտացիա	-	25387,8 հազար դրամ
2010թվականին փաստացի կատարվել են Ընդամենը եկամուտներ՝	-	34137,3 հազար դրամ
որից՝		
հողի հարկ	-	3980,1 հազար դրամ
գույքահարկ	-	2284,4 հազար դրամ
այլ եկամուտներ	-	2161,0 հազար դրամ
տեղական տուրք	-	324,0 հազար դրամ
դոտացիա	-	25387,8 հազար դրամ
2010թվականին նախատեսված են եղել Ընդամենը՝ ծախսեր.	-	38495,3 հազար դրամ
որից՝		
ընդ. բն. հանր. ծառ.	-	15894,0 հազար դրամ
տնտեսական հարաբեր.	-	7299,3 հազար դրամ
աղբահանում	-	980,0 հազար դրամ
բնակ. շին. և կոմունալ ծառ.	-	1650,0 հազար դրամ
այլ մշակութ. կազմ.	-	1100,0 հազար դրամ
կրթություն	-	7572,0 հազար դրամ
սոց. պաշտպանություն	-	2000,0 հազար դրամ
համայնքի պահուստային ֆոնդ	-	2000,0 հազար դրամ
2010թվականին փաստացի կատարվել են Ընդամենը՝ ծախսեր.	-	32000,1 հազար դրամ
որից՝		
ընդհանուր բն. հանր. ծառ.	-	15617,9 հազար դրամ
տնտեսական հարաբերություններ	-	6382,1 հազար դրամ
աղբահանում	-	980,0 հազար դրամ
բնակ. շին. և կոմունալ ծառ.	-	1650,0 հազար դրամ
այլ մշակութ. կազմ.	-	1100,0 հազար դրամ
կրթություն	-	6565,1 հազար դրամ
սոց. պաշտպանություն	-	1705,0 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 03

«21» ՀՈԲՆՎԱՐԻ 2011Թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները հաստատել՝ համաձայն հավելվածի:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ղ. Ղահրամանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝ _____ Ե. Հակոբյան

21 Հունվարի 2011թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

2011թ. պլանավորվում են բյուջետային մուտքեր.

հողի հարկ	- 3830,0	հազար դրամ
գույքահարկ	- 2364,0	հազար դրամ
տեղական տուրքեր	- 100,0	հազար դրամ
այլ եկամուտներ	- 1860,0	հազար դրամ
դոտացիա	- 25400,2	հազար դրամ
ընդամենը եկամուտներ	- 23554,2	հազար դրամ

2011թ. պլանավորվում են բյուջետային ծախսեր.

ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	- 14806,0	հազար դրամ
տնտեսական հարաբերություններ	- 13641,4	հազար դրամ
աղբահանում	- 980,0	հազար դրամ
բնակ. շին. և կոմ. ծառայություն	- 1696,2	հազար դրամ
հանգիստ, մշակույթ	- 1100,0	հազար դրամ
կրթություն	- 6972,0	հազար դրամ
սոցիալական պաշտպանություն	- 1800,0	հազար դրամ
պահուստային ֆոնդ	- 2200,0	հազար դրամ
ընդամենը ծախսեր	- 33195,6	հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 04

«21» ՀՈՒՆՎԱՐԻ 2011Թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՁԱՅՆ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ՝ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում վարչական իրավախախտումների համար վարչական տուգանքի չափ սահմանել «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական տուգանքի նվազագույն սանդղակի չափը:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ղ. Ղահրամանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝ _____ Ե. Հակոբյան

21 հունվարի 2011թ.

գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 05

«21» ՀՈՒՆՎԱՐԻ 2011Թ.

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՍԱՆ,
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղապետարանի կարիքների համար ապրանքների ձեռք բերման, աշխատանքների և ծառայությունների մատուցման համար թույլատրել կնքել գնման պայմանագրեր:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան /Կողմ/

Ղ. Ղահրամանյան /Կողմ/

Գնել Վարդանյան /Կողմ/

Խ. Սոսյան /Կողմ/

Հ. Վարդանյան /Կողմ/

Հ. Սարգսյան /Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝ _____ Ե. Հակոբյան

21 Հունվարի 2011թ.

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 6**

21 մարտի 2011 թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 21 ՄԱՐՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի ավագանու 21 Մարտի 2011թվականի թիվ 02 նիստի օրակարգը:

Նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2010թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 48-Ն որոշումն անվավեր ճանաչելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2011 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկը «Անուշավանի նախակրթարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում 1991թվականին կազմավորված Հայաստանի Հանրապետության սահմանների և Արցախի պաշտպանության ջոկատի ներքոհիշյալ մարտիկներին՝ 20 ամյակի կապակցությամբ դրամական օգնություն տրամադրելու մասին

1. Ղահրամանյան Սերյոժա Վիլհեմի
2. Աթոյան Գնել Լևոնի
3. Վարդանյան Վաղինակ Ռուբենի
4. Մարտիրոսյան Աշոտ Վալիկոյի
5. Համբարձումյան Խաչատուր Լիպարիտի
6. Տեփանոսյան Վարշամ Ավետիքի
7. Նազարեթյան Սարգիս Վաղարշակի
8. Հարությունյան Ռաֆիկ Շիրինի
9. Մաթոսյան Մկրտիչ Վելիխանի

10. Գալստյան Խաչատուր Վարչամի

11. Ջաքարյան Սեդա /զոհված ազատամարտիկի մայր/

12. Բուդաղյան Սաշա Աղասու

Ջեկ. Համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի բնակիչ՝ Ռեուցքաբանության Ազգային Կենտրոնում աջ ոտքի սրունքի ամպուտացիա տարած Վաչագան Սերյոժայի Տոնոյանի դիմումի համաձայն դրամական օգնություն տրամադրելու մասին

Ջեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան /Կողմ/

Ռ. Հարությունյան /Կողմ/

Գնել Վարդանյան /Կողմ/

Խ. Սոսյան /Կողմ/

Հ. Վարդանյան /Կողմ/

Հ. Սարգսյան /Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ թիվ 7-Ն

21մարտի 2011թվական
Անուշավան

գ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 48-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի

70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան գյուղական համայնքի վարչական տարածքում 2011 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 48-Ն որոշումը:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ռ. Հարությունյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ թիվ 8-Ն

21 մարտի 2011թվական
գ. Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի ու վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի տարածքում 2011 թվականի համար սահմանել տեղական տուրքերի ու վճարների դրույթաչափերը՝ համաձայն հավելվածի:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Ռ. Հարությունյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական
գ. Անուշավան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21- Ի ԹԻՎ 8--Ն ՈՐՈՇՄԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի՝ այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

2) 1-ին կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանմեկ հազար դրամ,

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է.

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար երկու հարյուր հիսուն դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ,

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հարյուր հազար դրամ:

6. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ մեկ հարյուր հազար դրամ,

3) բաղնիքների / սաունաների/ համար՝ երկու հարյուր հազար դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ավկոհողային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

2) թունդ ավկոհողային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ,

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ երկու հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ տաս հազար դրամ:

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ թիվ 9-Ն

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթով
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Անուշավանի գյուղական համայնքի 2011թվականի բյուջեում «Ճանապարհների նորոգում»
4251 հոդվածի 2-րդ եռամսյակով 330 000/երեք հարյուր երեսուն հազար/ դրամ
պակասեցնել, 2-րդ եռամսյակով 330 000/երեք հարյուր երեսուն հազար/ դրամ ավելացնել
4213 «կոմունալ ծառայություններ» հոդվածին:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/կողմ/
Խ. Սոսյան	/կողմ/
Հ. Վարդանյան	/կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

21 մարտի 2011թվական

գ.Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԸ «ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերակազմավորել «Անուշավանի նախակրթարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան /Կողմ/

Գնել Վարդանյան /Կողմ/

Խ. Սոսյան /Կողմ/

Հ. Վարդանյան /Կողմ/

Հ. Սարգսյան /Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11

21 մարտի 2011թվական

գ.Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
1991ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈԿԱՏԻ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ
ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ՝ 20 ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ԴԱՅՐԱՄԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ ՎԻԼՅԵՄԻ
2. ԱԹՈՅԱՆ ԳՆԵԼ ԼԵՈՆԻ
3. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԴԻՆԱԿ ՌՈՒԲԵՆԻ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՇՈՏ ՎԱԼԻԿՈՅԻ
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ ԼԻՊԱՐԻՏԻ
6. ՏԵՓԱՆՈՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏԻՔԻ
7. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՂԱՐՇԱԿԻ
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱՖԻԿ ՇԻՐԻՆԻ
9. Բուդաղյան Սաշա Աղասու
10. ԳԱԼՍՏՅԱՆ ԽԱԶԱՏՈՒՐ ՎԱՐՇԱՄԻ
11. ԶԱՔԱՐՅԱՆ ՍԵՂԱ ՇԻՐԻՆԻ /ԶՈՅՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՄԱՅՐ/
12. ՄԱԹՈՍՅԱՆ ՄԿՐՏԻԶ ՎԵԼԻԽԱՆԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5-րդ կետի դրույթով
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում
1991թվականին կազմավորված Հայաստանի Հանրապետության սահմանների և Արցախի

պաշտպանության ջոկատի ներքոհիշյալ 12 մարտիկներին՝ 20 ամյակի կապակցությամբ համայնքային բյուջեից հատկացնել 240 000 /երկու հարյուր քառասուն հազար/ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/կողմ/
Խ. Սոսյան	/կողմ/
Հ. Վարդանյան	/կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21- Ի ԹԻՎ 11

ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքում 1991թվականին կազմավորված Հայաստանի Հանրապետության սահմանների և Արցախի պաշտպանության ջոկատի ներքոհիշյալ 12 մարտիկներին՝ 20 ամյակի կապակցությամբ համայնքային բյուջեից տրվելիք դրամական օգնության

1. Ղահրամանյան Սերյոժա Վիլհեմի	- 20 000
2. Աթոյան Գնել Լևոնի	- 20 000
3. Վարդանյան Վաղինակ Ռուբենի	- 20 000
4. Մարտիրոսյան Աշոտ Վալիկոյի	- 20 000
5. Համբարձումյան Խաչատուր Լիպարիտի	- 20 000
6. Տեփանոսյան Վարշամ Ավետիքի	- 20 000
7. Նազարեթյան Սարգիս Վաղարշակի	- 20 000
8. Հարությունյան Ռաֆիկ Շիրինի	- 20 000
9. Մաթոսյան Մկրտիչ Վելիխանի	- 20 000
10. Գալստյան Խաչատուր Վարշամի	- 20 000
11. Զաքարյան Սեդա /գոհված ազատամարտիկի մայր/	- 20 000
12. Բուդաղյան Սաշա Աղասու	- 20 000
ԸՆԴԱՄԵՆԸ	- 240 000

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

21 մարտի 2011թվական

գ.Անուշավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԱԶ ՈՏՔԻ ՍՐՈՒՆՔԻ ԱՄՊՈՒՏԱՑԻԱ ՏԱՐԱԾ
ՎԱԶԱԳԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՏՈՆՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԱՄԱԶԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5-րդ կետի դրույթով
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի բնակիչ՝
2011թվականի հունվարին Ուռուցքաբանության Ազգային Կենտրոնում աջ ոտքի սրունքի
ամպուտացիա տարած վաչագան Տոնոյանի դիմումի համաձայն համայնքային բյուջեից
հատկացնել 100 000/մեկ հարյուր հազար/ դրամ դրամական օգնություն

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Վարդանյան	/Կողմ/
Գնել Վարդանյան	/Կողմ/
Խ. Սոսյան	/Կողմ/
Հ. Վարդանյան	/Կողմ/
Հ. Սարգսյան	/Կողմ/

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

21 մարտի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 13-Ա**

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՄԱՅԻՍԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 12 հոդվածով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական
համայնքի ավագանու 20 Մայիսի 2011թվականի թիվ 3 նիստի օրակարգը:

Նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի
2011թվականի 21 հունվարի Նո3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի
2011- 2015թվականների սոցիալ -տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը
հաստատելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի
սեփականությունը համարվող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ
արտադրական նշանակության հողերից սեփականաշնորհված օբյեկտների
սպասարկման և պահպանման համար ուղղակի վաճառքով հողատարածք օտարելու
մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, դիմումների համաձայն, դրամական օգնություն տրամադրելու մասին

Ձեկ. համայնքի ղեկավար՝ Ե. Հակոբյան

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

/Կողմ/	Ռ. Հարությունյան
/Կողմ/	Գ. Վարդանյան
/Կողմ/	Հ. Վարդանյան
/Կողմ/	Ղ. Ղահրամանյան
/Կողմ/	Հ. Սարգսյան

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 14-Ն**

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ 21 ՀՈՒՆՎԱՐԻ ՆՈՅ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 3 կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի 2011 թվականի բյուջեի պահուստային միջոցներ 4891 հոդվածից 800 000/ ութ հարյուր հազար/ դրամ պակասեցնել և ավելացնել մշակույթի տան խաղասենյակի նորոգում 4251 հոդվածին՝ 800 000/ ութ հարյուր հազար/ դրամ:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

/Կողմ/	Ռ. Հարությունյան
/Կողմ/	Գ. Վարդանյան
/Կողմ/	Հ. Վարդանյան
/Կողմ/	Ղ. Ղահրամանյան
/Կողմ/	Հ. Սարգսյան

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

20 մայիսի 2011թվական
գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 15-Ա**

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011-2015ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16 հոդվածի 2 կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի գյուղական համայնքի 2011-2015թվականների սոցիալ - տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

/Կողմ/	Ռ. Հարությունյան
/Կողմ/	Գ. Վարդանյան
/Կողմ/	Հ. Վարդանյան
/Կողմ/	Ղ. Ղահրամանյան
/Կողմ/	Հ. Սարգսյան

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

20 մայիսի 2011թվական
գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 16-Ա**

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ,
ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ
ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման

կարգը, տարածագնահատման գոտիականության գործակիցները և սահմանները
հաստատելու մասին» N=1746 -ն որոշումներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի
ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի վարչական
սահմաններում գտնվող համայնքի սեփականությունը համարվող 08-014-114-012
կոնտուրի 2800 /երկու հազար ութ հարյուր / քառ.մ հողը ուղղակի վաճառքով օտարել «
ՌԱՄՍ» ՍՊԸ-ին կադաստրային լրիվ արժեքով, 1 /մեկ/ քառ. մ 222 /երկու հարյուր
քսաներկու/ դրամ, ընդամենը գումարով 621 600 /վեց հարյուր քսանմեկ հազար վեց
հարյուր/ դրամ:

Անուշավան համայնքի ավագանու անդամներ՝

/Կողմ/	Ռ. Հարությունյան
/Կողմ/	Գ. Վարդանյան
/Կողմ/	Հ. Վարդանյան
/Կողմ/	Ղ. Ղահրամանյան
/Կողմ/	Հ. Սարգսյան

Անուշավան համայնքի ղեկավար՝

Ե. Հակոբյան

20 մայիսի 2011թվական
գ. Անուշավան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 17-Ա**

20 մայիսի 2011թվական

գ. Անուշավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻԶՆԵՐԻՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ,
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

